ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Նկատի ունենալով համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը համայնքի պարտադիր խնդիրներում ներառված լինելու հանգամանքը, համայնքի ղեկավարին սոցիալական պաշտպանության բնագավառում վերապահված լիազորություններն ու ՏԻՄ օրենսդրության պահանջները, և ղեկավարվելով <<Սոցիալական աջակցության մասին>> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի կարգավորումներով՝ համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացվում <<Սիսիան համայնքի համայնքային սոցիալական ծրագրին հավանություն տալու մասին>> ավագանու որոշման նախագիծը՝ իր հավելվածով:

Համայնքի ղեկավարի տեղակալ՝ Ա. Կարապետյան

ՏԵՂԵԿԱՆՔ

Ներկայացված որոշման նախագծի ընդունումից հետո համայնքի բյուջեի ծախսային մասում կկատարվեն համապատասխան պլանավորումները:

Համայնքի ղեկավարի տեղակալ՝ Ա. Կարապետյան